# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 828, www.court.am*

**N ԴԴ-2-Ե-** 10

**«07» հունվարի 2026թ.**

**«ՀՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ**
*(հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 19 փ., 4 շ., 5 բն.)*

***Հարգելի՛ պարոն Ստեփանյան,***

Սույնով ծանուցում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/23» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով (այսուհետ՝ Ընթացակարգ) Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների, տոներային քարտրիջների և չիպային քարտերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ 17-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով «ՀՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻ» ՍՊԸ-ն հայտարարվել է Ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2025թ. դեկտեմբերի 26-ը ներառյալ:

Հիշյալ անգործության ժամկետում պայմանագիր կնքելու մասին որոշումը չի բողոքարկվել:

Տեղեկացնում եմ, որ 17-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների (Ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին (համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758) համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է՝ 17-րդ չափաբաժնի մասով՝ կնքվելիք պայմանագրի գնի, իսկ 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով՝ գնվելիք ապրանքների գնման գների 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է՝ 17-րդ չափաբաժինների մասով՝ կնքվելիք պայմանագրի գնի, իսկ 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով՝ գնվելիք ապրանքների գնման գների 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

**Հարգանքով՝**

**ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

*Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/23» ծածկագրով*
*գնման ընթացակարգի համակարգող՝ Մ. Հայրապետյան*
*Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788*